



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ (DIGEST)**

N2(3) 2008-2009թ. դեկտեմբերի 20- հունվարի 20

26 փետրվարի, 2009թ.

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ.....	3
1.1 Օրենքներ.....	3
1.2 ՀՀ կառավարության որոշումներ.....	6
1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ.....	6
2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ.....	8
3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ.....	10
3.1 Կառուցվածք և գործառույթներ.....	10
3.2 Ծրագրեր և կատարողականություն.....	10
3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների.....	11
3.4 Միջազգային համագործակցություն.....	12
3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում.....	13
3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն.....	13
3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր.....	14

1. Հարկային և մաքսային օրենսդրության նորություններ

1.1 Օրենքներ

Փաստաթուղթ.	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-246-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	09 հունվարի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) կատարվող փոփոխություններով և լրացումներով.

- ա) Օրենքի 3-րդ հոդվածի գ) ենթակետով սահմանված՝ ԱԱՀ-ի շեմի չտարածման դեպքի համար բացառություն է արված գույքի վարձակալության, անհատույց օգտագործման, ոչ նյութական ակտիվների օտարման և տոկոսների ստացման, ինչպես նաև ներմուծվող և ոչ առևտրական գործունեության (վաճառքի) նպատակով ձեռք բերվող ապրանքների մասով,
- բ) Օրենքի 6.1 հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որով մասնավորապես սահմանվել է, որ
 - հետաձգված ԱԱՀ-ի գումարները վճարվում են մաքսային մարմիններին՝ որպես մաքսային մարմինների կողմից գանձվող՝ ներմուծված ապրանքներից ԱԱՀ-ի գումարներ,
 - հարկ վճարողի մոտ մինչև հետաձգման ժամկետի ավարտը առաջանում է ԱԱՀ-ի գծով պարտավորություն, եթե այն ապրանքները, որոնց նկատմամբ ներմուծման պահին կիրառվել է ԱԱՀ-ի հետաձգում, իրացվել են մինչև ներմուծված ապրանքների ժամկետի ավարտը,
- գ) սահմանվել է, որ ՀՀ տարածքից “Վերարտահանում” մաքսային ռեժիմով ապրանքների արտահանման գործարքները ԱԱՀ-ով չեն հարկվում, բացառությամբ “Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար” մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների նկատմամբ “Վերարտահանում” ռեժիմի կիրառման դեպքի: Վերջինիս դեպքում կիրառվում է ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ,
- դ) Օրենքի 23-րդ հոդվածում կատարված լրացումներով և փոփոխություններով սահմանվել է, որ կանխիկ դրամով վճարված գումարները օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են հաշվանցվել նաև հարկային հաշիվներում առանձնացված գումարների չափով՝ համապատասխան սահմանափակումները հաշվի առնելով,
- ե) սահմանվել է, որ հոդվածի ապրանքային մնացորդների մասին վերաբերող դրույթը կիրառելի է 2008 թվականի հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած այն հարկ վճարողների նկատմամբ, որոնց իրացումից հասույթը 2008 թվականի արդյունքում չի գերազանցել 50 միլիոն դրամը,
- զ) սահմանվել է, որ ԱԱՀ վճարողների կողմից կարող են ներկայացվել նաև տեղեկությունների ճշգրտումներ (ճշգրտված տեղեկություններ), ինչպես նաև օրենքի 43.1 հոդվածով նախատեսված տուգանքի բացառում՝ ճշգրտված տեղեկությունների ներկայացման դեպքերի համար:

Փաստաթուղթ.	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-240-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	01 փետրվարի, 2009թ., բացառությամբ 1-ին և 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում 2009թ. հուլիսի 1-ից

Համառոտ նկարագիր

- Օրենքում կատարված փոփոխություններով և լրացումներով մասնավորապես սահմանվել է, որ
 - ա) 2009 թվականի հուլիսի 1-ից հաստատագրված վճարով կհարկվի նաև ՀՀ կառավարության լիազորված մարմնի (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն) կողմից սահմանված չափանիշներին չհամապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտների գործունեությունը,
 - բ) վարսավիրանոցներում մատուցվող դիմահարդարման և այլ ծառայությունները 2009 թվականի փետրվարի 1-ից ևս կհարկվեն հաստատագրված վճարով,
 - գ) ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեության մասով 20 դրամ հաշվարկային

դրույքաչափի կիրառման համար ամսվա ընթացքում գազի իրացման ծավալը չի կարող պակաս լինել ստացված գազի ծավալի 87.5%-ից,

դ) ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեությունը հաստատագրված վճարով հարկման ենթակա է մինչև 2010 թվականի մայիսի 1-ը: Սահմանվել են պարտադիր պահանջներ, որի ապահովման դեպքում մինչ նշված ժամկետը տվյալ գործունեության տեսակը հարկ վճարողի գրավոր դիմումի համաձայն կարող է համարվել ընդհանուր կարգով հարկման օբյեկտ (նշված նորմը ուժի մեջ է 2009 թվականի հուլիսի 1-ից),

ե) Փոխոխվել են գործունեության հետևյալ տեսակների համար պատիկ մեծությունները՝
 - խաղատների գործունեության կազմակերպման համար հաստատագրված վճարի ամսական չափը սահմանվել է ելակետային տվյալի 4000000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ,
 - շահումով խաղային ավտոմատների շահագործման համար հաստատագրված վճարի ամսական չափը սահմանվել է այլ ավտոմատների համար՝ համապատասխան ելակետային տվյալի 125000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

Փաստաթուղթ.	«Օլախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-254-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	30 հունվարի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Կատարված փոփոխությամբ վերանայվել են ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ֆիլտրով և առանց ֆիլտրի սիգարետների համար սահմանված հաստատագրված վճարների չափերը: Մասնավորապես՝ ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում արտադրվող ֆիլտրով սիգարետների համար հաստատագրված վճարների չափը (1000 հատի համար) սահմանվել է ավելի բարձր՝ համապատասխանաբար 6500 դրամ և 4000 դրամ, իսկ առանց ֆիլտրի սիգարետների համար համապատասխանաբար՝ 3250 դրամ և 1950 դրամ:

Փաստաթուղթ.	«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-248-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	09 հունվարի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Սահմանվել են որպես նորմավորվող ծախսեր հովանավորչական ծախսերը՝ ներկայացուցչական ծախսերին համանման, հովանավորչական ծախսերի նորմաները գերազանցող ծախսերը չեն նվազեցվելու համախառն եկամտից հարկվող շահույթը որոշելիս, սակայն ԱԱՀ վճարող չհանդիսացող կազմակերպությունների համար ԱԱՀ վճարող չհամարվելու ժամանակաշրջանում այդ ծախսերը հաշվի են առնվում ամբողջությամբ:

Վերաշարադրվել է 32-րդ հոդվածի 6-րդ կետը՝ համախառն եկամտի բացակայության դեպքում ևս նվազեցման են ընդունվում այդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված ծախսերը (վարչական ծախսերը, արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերը, ոչ արտադրական այլ ծախսերը և ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերը):

Հայաստանում հաշվառում չունեցող ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար հստակեցվեցին հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներից շահութահարկի հաշվարկման դրույքաչափերը՝ հարկային գործակալի բացակայության դեպքում հայաստանյան աղբյուրներից ոչ ռեզիդենտ կազմակերպության ստացած եկամուտներից շահութահարկը այդ կազմակերպության կողմից հաշվարկվելու է հարկային գործակալների համար Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով (5% և 10%):

Փաստաթուղթ.	«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի 2008 թ., ՀՕ-251-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	09 հունվարի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Մահմանվել են ֆիզիկական անձանց համախառն եկամտից որպես նվազեցվող եկամուտներ.

ա) ՀՀ կառավարության սահմանած կարգով հարկային վարչարարության օժանդակության նպատակով անցկացվող վիճակահանության արդյունքում տրամադրվող պարգևավճարները և բոնուսները.

բ) հարկային գործակալների կողմից օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում տրվող փոխհատուցման վճարները (այդ թվում՝ գործուղումների հետ կապված ծախսերի փոխհատուցման համար):

Փաստաթուղթ.	«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենք
Մասաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-247-Ն
Հրատարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող 31-րդ օրը

Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանված ներքոնշյալ գործունեության տեսակներով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք կարող են զբաղվել՝ դառնալով արտոնագրային վճար վճարող, որը իրենց համար փոխարինում է եկամտահարկին և ավելացված արժեքի հարկին: Արտոնագրային վճար վճարող կարող են համարվել այն ֆիզիկական անձինք, որոնց կողմից նախորդ տարվա ընթացքում նշված գործունեության տեսակների մասով մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների իրացման շրջանառությունը չի գերազանցել 2,5 մլն.դրամը: Արտոնագրային վճար վճարող չեն կարող համարվել այն ֆիզիկական անձինք, որոնք նախորդ օրացուցային տարում հանդիսացել են անհատ ձեռնարկատեր, կամ իրենց գործունեության իրականացման համար օգտագործում են այլ անձանց աշխատանքը: Արտոնագրային վճար վճարող համարվելու համար նշված պայմաններին բավարարող ֆիզիկական անձինք իրենց հաշվառման (բնակության, գործունեության իրականացման) վայրի հարկային մարմնին ներկայացնում են սահմանված ձևով դիմում-հայտարարություն, հաշվառվում են հարկային մարմնում և ստանում սահմանված ձևի արտոնագիր: Արտոնագիրը տրամադրվում է դիմում-հայտարարության ներկայացման տարվա (կամ կիսամյակի) համար:

Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով արտոնագրային վճարի տարեկան չափը սահմանվել է՝ Երևան քաղաքում՝ 60,0 հազ.դրամ, մարզկենտրոններում՝ 30,0 հազ.դրամ, այլ քաղաքներում և Երևան քաղաքի վարչական սահմաններից մինչև 20 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում՝ 24,0 հազ.դրամ, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում՝ 3,6 հազ.դրամ, այլ վայրերում՝ 12,0 հազ.դրամ: Մեկից ավելի գործունեության տեսակներ իրականացնելու համար երկրորդ և հաջորդ յուրաքանչյուր գործունեության տեսակի մասով արտոնագրային վճարի չափը սահմանվել է տարեկան չափի 50 տոկոսի չափով:

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից արտոնագրային վճար վճարող համարվելու գործունեության տեսակներն են.

1. բնակչության պատվերով կատարվող առանձին արտադրատեսակների (կոշիկեղենի, հագուստի, գլխարկների, գորգերի, հեծանիվների և այլ կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի) արտադրություն և նորոգում
2. երաժշտական գործիքների, կենցաղային տեխնիկայի և (կամ) ժամացույցների նորոգում և տեխնիկական սպասարկում
3. կար ու ձևի, հելունագործության դասավանդում
4. լեզուների ուսուցման դասընթացներ
5. բուհեր և այլ հաստատություններ ընդունվելու համար այլ վճարովի դասընթացներ
6. պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն
7. անկախ դերասանների, կերպարվեստանոցների գործունեություն
8. սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն
9. տնային տնտեսությունների վարում սպասարկու անձնակազմի կողմից
10. դարբնոցային գործունեություն:

Փաստաթուղթ.	«Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-250-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	09 հունվարի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Օրենքով սահմանվել է, որ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ժամկետի ավարտից հետո, գույքահարկից ազատվում են նաև ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում ծառայության անցած և ռազմաուսումնական հաստատություններն ավարտած անձինք՝ հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող **մեկ շինության մասով**, որի հարկման բազան չի գերազանցում 40.0 մլն դրամը (չգերազանցող մասով) և **մեկ փոխադրամիջոցի մասով**, որի հարկման բազան չի գերազանցում 150 ձիաուժը (չգերազանցող մասով):

Միաժամանակ, օրենքով սահմանվել է, որ զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք այլևս չեն արտոնվելու հասարակական և արտադրական շինությունների մասով: Բացի այդ, զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք ևս գույքահարկի արտոնությունից օգտվելու են հասարակական և (կամ) արտադրական նշանակության շինություն չհանդիսացող **մեկ շինության մասով**, և **մեկ փոխադրամիջոցի մասով**, սակայն առանց հարկման բազայի սահմանափակման:

Հարկ վճարողներին սեփականության իրավունքով մեկից ավելի շինություն կամ փոխադրամիջոց պատկանելու դեպքում գույքահարկի արտոնությունը կիրառվելու է հարկ վճարողի կողմից ընտրված մեկ շինության կամ մեկ փոխադրամիջոցի համար: Արտոնության կիրառման հիմք է հանդիսանալու անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կամ ոստիկանության լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանքը՝ անձին սեփականության իրավունքով պատկանող շինությունների կամ փոխադրամիջոցների թվաքանակի մասին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկանքներ այլ շինությունների կամ այլ փոխադրամիջոցների համար գույքահարկի արտոնություն կիրառված չլինելու վերաբերյալ:

1.2 ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ.	“Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 12-ի N 471 և 2007 թվականի նոյեմբերի 23-ի N 1386-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը.	18 դեկտեմբերի, 2008 թ., 1508-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 75 (665), 29/12/2008թ.
Ուժի մեջ է.	01 հունվարի 2009թ.

Համառոտ նկարագիր

“Պարզեցված հարկի մասին” ՀՀ օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին” ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված, 2009թ. Հունվարի 1-ից ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 12-ի “Պարզեցված հարկ վճարողների կողմից եկամուտների և ծախսերի հաշվառման կարգի մասին” N 471 և 2007թ. նոյեմբերի 23-ի “Պարզեցված հարկային հաշվառման (այդ թվում՝ ապրանքանյութական արժեքների գրանցումների մասով) կարգը սահմանելու մասին” N 1386-Ն որոշումները:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ

Փաստաթուղթ.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2008թ. դեկտեմբերի 23-ի “Առանձին հարկ վճարողների 2008 թվականի շահութահարկի և եկամտահարկի տարեկան հաշվարկների լրացման վերաբերյալ” պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը.	23 դեկտեմբերի, 2008թ., 11
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 2 (320), 15/01/2009թ.
Ուժի մեջ է.	15 հունվար 2009թ.

Համառոտ նկարագիր

Պաշտոնապես պարզաբանվել են “Շահութահարկի մասին” ՀՀ օրենքի 76-րդ հոդվածով և

“Եկամտահարկի մասին” ՀՀ օրենքի 31.2-րդ հոդվածով սահմանված դրույթները՝ 2008 թվականի Հունվարի 1-ից օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած.

- **առևտրային կազմակերպությունները** 2008 թվականի շահութահարկի հաշվարկի 0600 տողում նշում են հաշվարկի 0500 տողի և 20%-ի արտադրյալը՝ համախառն եկամտի 2%-ի և 10%-ի սահմաններում, գումարած 2008 թվականին ավարտված ստուգումներով լրացուցիչ հայտնաբերված՝ նախորդ տարիներին վերաբերող շահութահարկի գումարները (տող 0600Ս).

- **անհատ ձեռնարկատերերը** 2008 թվականի ՀՀ կառավարության 04.09.2008թ. N 1038-Ն որոշման հավելված 2-ով սահմանված “Ֆիզիկական անձի տարեկան եկամուտների մասին հաշվարկի” [58] տողում նշում են տարվա համար հաշվարկված եկամտահարկի հանրագումարը (տող[23] + տող[49] + տող[57])՝ տվյալ տարվա համախառն եկամտի (տող[1] + տող[19]/սյունակ[16] + տող[20]/սյունակ[16] + տող[21]/սյունակ[16] + տող[22]/սյունակ[16] + տող[24] + տող[44]/I...XII) 2%-ի և 10%-ի սահմաններում:

Փաստաթուղթ.	“Հարկ վճարողի կողմից տեղեկություններ փակցնելու հայտարարության օրինակելի ձևը հաստատելու մասին” հրաման
Ամսաթիվը և համարը.	12 դեկտեմբերի, 2008թ., 15-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 1(319), 08/01/2009թ
Ուժի մեջ է.	18 հունվարի 2009թ.

Համառոտ նկարագիր

“Հարկերի մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի “թ” կետին համապատասխան հարկ վճարողը պարտավոր է իր գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում առավել տեսանելի տեղում (իսկ գտնվելու և (կամ) կառավարման որոշումների ընդունման, օպերատիվ ֆինանսական ղեկավարման վայրերում՝ համապատասխան ցուցանակների վրա) փակցնել հարկային մարմնի սահմանած ձեռի հայտարարություն՝ նշելով հարկ վճարողի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը), հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության տվյալ վայրի հասցեն և տվյալ հասցեում իրականացվող գործունեության տեսակը (տեսակները):

Հրամանով հաստատվել է “Հարկերի մասին” ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի “թ” կետին համապատասխան հարկ վճարողների կողմից գործունեության իրականացման յուրաքանչյուր հասցեում, առավել տեսանելի տեղում տեղեկություններ փակցնելու **հայտարարության օրինակելի ձևը**:

Սույն տեղեկությունները չփակցնելու դեպքում կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից գանձվում է 50 հազար դրամի չափով տուգանք՝ յուրաքանչյուր հասցեում չփակցրած տեղեկության մասով, իսկ խախտումն արձանագրելուն հաջորդող մեկ տարվա ընթացքում նշված տեղեկությունները չփակցնելու կրկնական փաստ արձանագրվելու դեպքում գանձվում է տուգանք՝ յուրաքանչյուր չփակցրած տեղեկության մասով՝ 500 հազար դրամի չափով: Ընդ որում, սահմանված տուգանքները կիրառվում են ՀՀ կառավարության կողմից տեղեկությունների ներկայացման ձևը և կարգը հաստատելու վերաբերյալ ընդունված որոշումն ուժի մեջ մտնելու ամսաթվից, որը դեռ ուժի մեջ չէ:

Փաստաթուղթ.	“Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մի քանի հարցերի մասին” հրահանգը հաստատելու մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	24 դեկտեմբերի, 2008թ., 17-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N° 2 (320), 15/01/2009թ
Ուժի մեջ է.	20 հունվարի 2009թ.

Համառոտ նկարագիր

Հրամանով կարգավորվել են ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման հետ կապված մի քանի հարցեր: Մասնավորապես, սահմանվել է, որ հայտարարագիր չեն ներկայացնում ժամանակավոր պաշտոնակատարները, պաշտոնատար անձին ժամանակավոր փոխարինողները, ժամանակավոր աշխատանքային պայմանագիր կնքած աշխատողները, ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձինք: Մահմանվել է նաև, որ այլ ֆիզիկական անձը կամ

իրավաբանական անձը հայտարարագիրը հարկային մարմին կարող է ներկայացնել կամ ուղարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագիր ունենալու դեպքում:

Փաստաթուղթ.	“Վերադաս հարկային մարմին հայտարարագիր ներկայացնողների մասին” հրահանգը հաստատելու մասին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	դեկտեմբերի 24, 2008թ., 18-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 2 (320), 15/01/2009թ
Ուժի մեջ է.	20 հունվարի 2009թ.

Համառոտ նկարագիր

«Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, հայտարարատուն գույքի և եկամուտների հայտարարագիրը ներկայացնում է իր հաշվառման, իսկ դրա բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության հիմնական բնակչության վայրի (այսուհետ՝ հաշվառման վայրի) հարկային մարմին: Նույն հոդվածի 7-րդ կետի համաձայն, հարկային մարմնի սահմանած դեպքում, հայտարարատուն հայտարարագիրը ներկայացնում է վերադաս հարկային մարմին: Սույն հրամանով հաստատվել է վերադաս հարկային մարմին հայտարարագիր ներկայացնողների ցանկը: Մասնավորապես, վերադաս հարկային մարմին հայտարարագիր ներկայացնող են հանդիսանում պետական բարձրաստիճան պաշտոնյաները և նրանց փոխկապակցված անձինք:

Փաստաթուղթ.	“Կազմակերպությունների կողմից, հարկային մարմնի պահանջով, ֆիզիկական անձանց հայտարարագրման ենթակա գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին ներկայացնելու ծանուցագրի ձևը սահմանելու մասին” ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման
Ամսաթիվը և համարը.	դեկտեմբերի 24, 2008թ., 19-Ն
Հրապարակումը.	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր № 2 (320), 15/01/2009թ
Ուժի մեջ է.	20 հունվարի 2009թ.

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 11.01.2007թ. «Գույքի վերաբերյալ տեղեկությունները հարկային մարմին ներկայացնելու կարգը հաստատելու մասին» N 275-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված «Կազմակերպությունների կողմից, հարկային մարմնի պահանջով, հայտարարագրման ենթակա գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու» կարգի և ժամկետների 4-րդ կետի համաձայն, հարկային մարմինն առանձին կազմակերպություններից, ծանուցագրի հիման վրա, կարող է պահանջել հայտարարագրման ենթակա գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ: Սույն հրամանով սահմանվել է կազմակերպության կողմից, հարկային մարմնի պահանջով, հայտարարագրման ենթակա գույքի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ծանուցագրի ձևը:

2. Հարակից (տնտեսական) օրենսդրության նշանակալի փոփոխություններ

Փաստաթուղթ.	«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը.	30 դեկտեմբերի, 2008թ., ՀՕ-241-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	29 մարտի, 2009թ.

Համառոտ նկարագիր

Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ 1997թ. դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի խմբագրության, ՀՀ օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) էլքի համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա. մինչև 12 տարեկան երեխաները,

բ. տարանցիկ ուղևորները,

գ. Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները և նրանց հավասարեցված անձինք,

դ. ՀՀ օդանավակայաններից մինչև 450 կիլոմետր շառավղով օդային փոխադրումների

իրականացման դեպքում՝ օդային տրանսպորտի միջոցով մեկնող ֆիզիկական անձիք:

Օրենքով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի համար սահմանված պետական տուրքի գումարները 2009 թվականի մարտի 29-ից սկսած գանձելու են ՀՀ ավիափոխադրողները, ՀՀ-ում հաշվառված օտարերկրյա ավիափոխադրողների ներկայացուցչությունները ավիատոմսեր իրացնելիս, իսկ ՀՀ-ում հաշվառված ներկայացուցչություններ չունեցող օտարերկրյա ավիափոխադրողների և ոչ կանոնավոր չվերթների պարագայում՝ օդանավակայան շահագործող կազմակերպությունները թռիչքից առաջ:

ՀՀ ավիափոխադրողները և ՀՀ-ում հաշվառված օտարերկրյա ավիափոխադրողների ներկայացուցչությունները **ուղևորների փոխադրման տոմսի մեջ ներառված պետական տուրքի գումարները** պետական բյուջե են փոխանցում ոչ ուշ, քան փաստացի թռիչքի օրվան հաջորդող **3 բանկային օրվա ընթացքում**, իսկ ոչ կանոնավոր օդային փոխադրումների, ինչպես նաև ՀՀ-ում ներկայացուցչություններ չունեցող օտարերկրյա կազմակերպությունների կողմից օդային փոխադրումներ իրականացնելու դեպքում փաստացի թռիչքի օրվան հաջորդող **10 բանկային օրվա ընթացքում** պետական տուրքի գումարները հաշվարկում և պետական բյուջե են փոխանցում օդանավակայանները շահագործող կազմակերպությունները՝ **անկախ օդային փոխադրումներ իրականացնող կազմակերպություններից փոխանցումների ստացումից**:

Եթե օրենքով սահմանված ժամկետներում ՀՀ պետական բյուջե չվճարված պետական տուրքի գումարը **գերազանցում է 5.0 մլն դրամը**, պետական տուրքի հաշվարկման և գանձման կարգի պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող ՀՀ կառավարության լիազորված մարմնի ղեկավարը կազմակերպությունների **բանկային հաշիվների նկատմամբ կիրառում է արգելանք**՝ ապահովելով պետական տուրքի գծով պարտավորությունների կատարումը:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով մեկնող ֆիզիկական անձանց ելքի դեպքում պետական տուրքի գանձման նոր մեխանիզմի ներդրմամբ պայմանավորված՝ օրենքով հստակեցվել է ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի **վճարումից ազատվող** ֆիզիկական անձանց շրջանակը:

Փաստաթուղթ.	«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի, 2008թ. ՀՕ-249-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող երեսուներկերորդ օրը

Համառոտ նկարագիր

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ 2002 թ. նոյեմբերի 19-ի ՀՕ-519-Ն օրենքի 45-րդ հոդվածում լրացմանը համաձայն, արտոնագրային վճար վճարելու ժամանակահատվածը հաշվառվում է ապահովագրական ստաժում օրենքով սահմանված կարգով և չափով սոցիալական վճարներ կատարած լինելու դեպքում:

Փաստաթուղթ.	“Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին” փոփոխություններ և լրացում կատարելու մասին” ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	26 դեկտեմբերի, 2008 թ., ՀՕ-252-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30/12/2008թ.
Ուժի մեջ է.	Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Համաձայն «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ 1997թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-179 օրենքի 7-րդ հոդվածի խմբագրության, ապահովարի սոցիալական վճարների պարտավորությունների դիմաց հաշվանցումը, սոցիալական վճարների գերավճարի հաշվին հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցումը կամ վերադարձն իրականացվում է սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելված 1-ով սահմանված կարգով և ժամկետներում:

Հաշվարկված սոցիալական վճարների պարտավորության գումարները չեն կարող նվազեցվել, իսկ հաշվանցվող գումարները չեն կարող ավելացվել, եթե այդ գումարները վերաբերում են այն հաշվետու ժամանակաշրջանին, որից անցել է 3 տարի:

Փաստաթուղթ.	«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին
-------------	---

Ամսաթիվը և համարը.	26 դեկտեմբերի, 2008թ., ՀՕ-226-Ն
Հրապարակումը.	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 76 (666), 30.12.2008թ.
Ուժի մեջ է.	պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիր

Համաձայն «Հաշվապահական հաշվառման մասին» 2002թ. դեկտեմբերի 26-ի ՀՕ-515-Ն ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի երրորդ պարբերության խմբագրության, կառավարության կողմից սահմանվել է նախորդ օրացուցային տարում ստացման ենթակա հասույթի 100 միլիոն դրամ մեծությունը չգերազանցող հարկ վճարողների համար հարկային հաշվառման հատուկ կանոնակարգ:

Բանկերը, վարկային կազմակերպությունները, վճարահաշվարկային կազմակերպությունները, արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկողները, ներդրումային ընկերությունները, կարգավորող շուկայի օպերատորը, կենտրոնական դեպոզիտարիան, ապահովագրական ընկերությունները, վերաապահովագրական ընկերությունները, ապահովագրական բրոքերները ֆինանսական հաշվետվությունները կազմում և ներկայացնում են կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ օրենքի համաձայն՝ հիմնադիրներին, մասնակիցներին, օրենքով սահմանված կարգով՝ պետական մարմիններին ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին և միջազգային ստանդարտների ուղեցույցներին համապատասխան:

Վերոնշյալ պարբերությունում չնշված կազմակերպությունները, բացառությամբ հարկային հաշվառման հատուկ կանոնակարգը կիրառող սուբյեկտների, պարտավոր են ֆինանսական հաշվետվությունները կազմել և ներկայացնել կազմակերպության հիմնադիր փաստաթղթերի կամ օրենքի համաձայն՝ հիմնադիրներին, մասնակիցներին, օրենքով սահմանված կարգով՝ պետական մարմիններին ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, միջազգային ստանդարտների ուղեցույցների, դրանց փոփոխությունների՝ կառավարության կողմից սահմանված կարգով հրապարակումից հետո՝ վեցամսյա ժամկետի ավարտին հաջորդող տարվա հունվարի մեկից:

Միաժամանակ օրենքում լրացում է կատարվել, համաձայն որի խոշոր կազմակերպությունը պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը: Մակայն տարեկան ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ:

- Նույն օրենքի իմաստով խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը, որի
 - ա. նախորդ տարվա գործունեությունից հասույթը գերազանցում է 500 մլն դրամը
 - բ. նախորդ տարեվերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է 500 միլիոն դրամը:

3. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ

3.1 Կառուցվածք և գործառնություններ

2008թ. դեկտեմբերի 4-ին ընդունվել և 2009թ. հունվարի 1-ից ուժի մեջ է ՀՀ կառավարության N 1425-Ն որոշումը, համաձայն որի

- վերահաստատվել է նոր միացյալ **ՊԵԿ-ի վերադաս մարմնի կառուցվածքը**, միացել են մի քանի նույնանուն ստորաբաժանումներ, լուծարվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայության ուսումնական կենտրոնը,
- կրճատվել է հարկային (տարածքային) տեսչությունների թվաքանակը 14 ՀՏ (ՏՀՏ)-ով՝ դառնալով 39 հարկային (տարածքային) տեսչություններ:

3.2 Ծրագրեր և կատարողականություն

3.2.1 Ծրագրեր և կատարողականություն / հարկային ծառայության մասով/

Համառոտագրի այս ժամանակահատվածի ընթացքում հաստատվել է ՀՀ կառավարության 15.01.09թ. «ՀՀ կառավարության 2008թ. օգոստոսի 7-ի N 941-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 61-Ն որոշումը: Ընդունված որոշմամբ փոփոխություն է կատարվել 50 միջոցառումների կատարման ժամկետներում: Ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել ռազմավարական ծրագրերում և/կամ տեքստում, փոփոխությունը վերաբերում է լոկ միջոցառումների ժամկետներին՝ դրանք ավելի կիրառական-իրատեսական դարձնելու համար¹:

¹ Ծրագրի 50 միջոցառումների կատարման ժամկետների փոփոխության պատճառները ներկայացվել են համառոտագրի նախորդ համարում:

Հաշվետվողականության ապահովման տեսանկյունից ամփոփվել են 2008թ. ընթացքում ծրագրով նախատեսված աշխատանքները, կատարվել է վերլուծություն, որի հիման վրա կազմվել է ծրագրի տարեկան ամփոփ հաշվետվություն և ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահին:

Այսպես՝.

- ծրագրի 79 միջոցառումների կատարման ժամկետներ սկսվել են 2008թ. և հաշվետվության կից հավելվածով ներկայացվել է յուրաքանչյուրի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկություններ,

- ծրագրով նախատեսված 109 միջոցառումներից 30-ի կատարման ժամկետները ավարտվել են 2008 թ-ին, որից 19 միջոցառումներ ամբողջությամբ կատարվել են (63% կատարողականություն): Իսկ մյուս միջոցառումները (11) կատարվել են մասնակի, հիմնականում նախագծային տեսքով, նախատեսվում է ֆորմալացում/հաստատում:

- ***Խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշների սահմանում և դրանց հիման վրա հարկ վճարողների գործերի փոխանցում խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն***

Մշակվել և հաստատման է ներկայացվել խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշների սահմանման և կիրառման կանոնակարգի հրամանի նախագիծը, ինչպես նաև՝ խոշոր հարկ վճարողների մոնիթորինգի ամսական ամփոփ որոշ ցուցանիշների սահմանման և վերլուծական հավելվածի մասին հրամանի նախագիծը:

Միաժամանակ ամփոփվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ՀՀ ԿԱ ՊԵԿ 2008թ. գործունեության հաշվետվությունը²: Ներկայացված հաշվետվությամբ 2008թ. ընթացքում արձանագրվել է հավաքագրվող եկամուտների աճ՝ 24.1 %: Հիմնական աճն ապահովվել է ԱԱՀ-ի, շահութահարկի, եկամտահարկի, հաստատագրված վճարների հաշվին: Հաշվետվությունը պարունակում է ամփոփ տեղեկատվություն 2008թ. ընթացքում կատարված ստուգումների արդյունքների վերաբերյալ, հարկային և մաքսային վարչարարության բարեփոխումների, ինչպես նաև 2008թ. ընթացքում միջազգային համագործակցության վերաբերյալ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հանձնարարությամբ պատրաստվել է համակարգի երկու տարածքային հարկային տեսչություններում պլիտտային միջոցառումների իրականացնելու ծրագրի նախագիծը:

2009թ. ծրագրի ընթացքն ապահովելու նպատակով մշակվել է «ՀՀ ԿԱ ՊԵԿ մասով 2009թ. ընթացքում կատարման ենթակա միջոցառումներն ըստ կատարման պատասխանատուների և ժամկետների հաստատելու մասին» հրամանը: Միաժամանակ մշակվել և ներքին կարծիքների է ուղարկվել ծրագրերի կատարողականության, հաշվետվողականության ապահովման միասնական մեթոդաբանություն: Վերջինս նպատակ ունի կանոնակարգել ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում տարեկան և այլ աշխատանքային ծրագրերից բխող միջոցառումների կատարման աշխատանքների իրականացումը, կազմակերպումը և արդյունքների կիրառումը: Հրամանի ընդունումից հետո այն կտարածվի դրանից հետո հաստատված բոլոր ծրագրերի վրա:

3.2.2 Ծրագրեր և կատարողականություն/ մաքսային ծառայության մասով/

Մաքսային վարչարարության բնագավառում իրականացվող բարեփոխումների համատեքստը, մշակված ՀՀ մաքսային վարչարարության ռազմավարության 2008-2012 թ.թ. արդիանականացված ծրագրով, հիմնված է ՀՀ կառավարության 2008-2012թ.թ. գործունեության ծրագրի և միջազգային լավագույն փորձի վրա: Նախատեսված 60 միջոցառումներից 17-ը ավարտի են հասցվել սահմանված ժամկետներում՝ մինչև 2008 թվականի չորրորդ եռամսյակի ավարտը: 17 միջոցառումից 5-ը ունեն շարունակական բնույթ:

3.3 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

3.3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների/ հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը 20.12.08թ. մինչև 20.01.09թ. ընթացքում լսել է ընդամենը 16 բողոք, որից բավարարվել է մասնակի 1 բողոք, մերժվել է 15 բողոք:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը 20.12.08-20.01.09թ. ընթացքում լսել է ընդամենը ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով իրականացված ծառայողական քննությունների ընթացքում ստեղծված թվով 4 նյութեր, որոնց արդյունքում թվով 10 հարկային

² Հաշվետվության համառոտ տարբերակը տեղադրված է ՊԵԿ հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի/ www.taxservice.am/ ՆՕ լրատվական բաժնում:

ծառայողներին հայտարարվել է բանավոր նկատողություն, իսկ 3-ին՝ գրավոր նկատողություն:

3.3.2 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների /մաքսային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2008թ. դեկտեմբերի 25-ի որոշմամբ նշանակվել է ծառայողական քննություն, որի արդյունքում մաքսատան բաժնի պետին հայտարարվել է խիստ նկատողություն կնիքը կորցնելու հետ կապված:

3.4 Միջազգային համագործակցություն

3.4.1 Միջազգային համագործակցություն /հարկային ծառայության մասով/

2009թ. հունվարի 1-ից սկսել է գործել “Հայաստանի Հանրապետության կառավարության և Իտալական Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին” կոնվենցիան: Այսպիսով 01.01.2009թ. դրությամբ նման համաձայնագրեր են գործում 29 պետությունների հետ, այդ թվում՝

Բելառուս	Չինաստան	Բելգիա
Լիտվա	Նիդերլանդներ	Լատվիա
Էստոնիա	Ավստրիա	Թուրքմենստան
Բուլղարիա	Վրաստան	Կանադա
Հունաստան	Թաիլանդ	Լիբանան
Հնդկաստան	Իրան	Ուկրաինա
Չինաստան	Ֆրանսիա	Մոլդովա
Նիդերլանդներ	Ռումինիա	Շվեյցարիա
Չինաստան	Ռուսաստան	

Նախնական համաձայնություն է ձեռք բերվել Ուզբեկստանի իրավասու մարմինների հետ՝ 2009թ. առաջին կիսամյակում ՀՀ և Ուզբեկստանի միջև կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագրի շուրջ բանակցությունների առաջին փուլն անցկացնելու մասին:

3.4.2 Միջազգային համագործակցություն /մաքսային ծառայության մասով/

2009 թվականի հունվարի 19-30-ը աշխատելու նպատակով ք. Երևան է ժամանել Համաշխարհային մաքսային կազմակերպության փորձագետների խումբը՝ ՀՄԿ Կոլումբոս ծրագրի շրջանակում դիագնոստիկ առաքելություն իրականացնելու նպատակով: ՀՀ կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն 2005 թվականի նոյեմբերի 28-ին ստորագրել է Համաշխարհային առևտրի անվտանգության և պարզեցման շրջանակային ստանդարտների ներդրման պատրաստակամության մասին դեկլարացիան:

ՀՄԿ-ն 2006 թվականի հունվարի 1-ից սկսել է իրականացնել Կոլումբոս ծրագիրը, որը պետք է օգնի ՀՄԿ անդամ-պետություններին Համաշխարհային առևտրի անվտանգության և պարզեցման շրջանակային ստանդարտների ներդրման հարցում: Կոլումբոս ծրագիրը բաղկացած է երեք փուլից: Առաջին փուլը ենթադրում է դիագնոստիկ ուսումնասիրության անցկացում, որի ընթացքում գնահատվում են տվյալ պետության կարիքները: Երկրորդ փուլը նախատեսում է գործողությունների ծրագրի նախապատրաստում, բարեփոխումների ծրագրի նախապատրաստում, քաղաքական աջակցության ապահովում, ֆինանսական աջակցություն, համապատասխան դոնորների որոնում և ծրագրի ամբողջական իրագործում: Երրորդ փուլում նախատեսվում է մոնիտորինգ և արդյունքների գնահատում:

ՀՄԿ 173 անդամ պետություններից 110 պետությունների մաքսային ծառայություններ հանդիսանում են Կոլումբոս ծրագրի շահառուներ: Ինչ վերաբերում է Եվրոպական տարածաշրջանին, ապա ՀՄԿ 50 անդամ-պետություններից 47-ը՝ այդ թվում Հայաստանը, ստորագրել են Համաշխարհային առևտրի անվտանգության և պարզեցման շրջանակային ստանդարտների ներդրման պատրաստակամության մասին դեկլարացիան: Դրանցից Կոլումբոս ծրագրի իրականացման հայտ են ներկայացրել 14 պետության մաքսային ծառայություն: Առաջին փուլը՝

դիագնոստիկ առաքելությունը իրականացվել է Ալբանիայում, Ադրբեջանում, Բելառուսում, Խորվաթիայում, Վրաստանում, Ղազախստանում, Ղրղզստանում, Մակեդոնիայում, Մոլդովայում, Մոնտենեգրոյում, Սերբիայում, Տաջիկստանում, Ուկրաինայում և Ուզբեկստանում: Դրանցից 9 պետությունում ներկայումս իրականացվում է Կոլումբոս ծրագրի երկրորդ փուլը:

3.5 Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում

Ուսուցում, մրցույթ և առաջխաղացում /հարկային և մաքսային ծառայությունների մասով/

Հարկային վարչարարության օժանդակության նպատակով վիճակահանության անցկացման արդյունքում շահող կտրոն տիրապետող ֆիզիկական անձանց պարզավճարների տրամադրման գործընթացի սահուն ընթացքն ապահովելու նպատակով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպվել է սեմինար-դասընթացներ ՀՀ տարածքում գործող բանկերի աշխատակիցների համար՝ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ տարբեր մարզերում: Բանկերի աշխատակիցները դասընթացի ընթացքում ծանոթացել են ՀԴՄ կտրոնների տեխնիկական, որական բնութագրերին և պաշտպանվածության աստիճաններին՝ պարզավճար ստանալու նպատակով ֆիզիկական անձանց կողմից բանկ ներկայացված ՀԴՄ կտրոնների օրենսդրության պահանջներին համապատասխանությունը ստուգելու համար:

3.6 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն

3.6.1 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն / հարկային ծառայության մասով/

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային ծառայության «Թեժ գիծ»-ը պաշտոնապես գործում է 2008թ. հոկտեմբերի 14-ից: 2009թ. հունվար ամսին ստացվել է 740 զանգ, որից 370 եղել են բողոքներ և առաջարկություններ, որոնք վերաբերել են «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի խախտման փաստերին: Բողոքների հիմնական մասը առնչվել է առևտրի իրականացման վայրերում ՀԴՄ նոր կտրոնների չտրամադրման կամ փոքր գումարով ՀԴՄ կտրոնի տրամադրման փաստերին: Հարցերի մի ստվար խումբ էլ վերաբերել է հարկային օրենսդրության մեջ կատարված վերջին փոփոխություններին և դրանց առնչվող մի շարք հարցերի: Զանգահարողների մեծ մասի հարցումները հիմնականում վերաբերել են փետրվարի 6-ին կայանալիք վիճակահանությանը և դրա հետ կապված բազմաթիվ այլ հարցերի:

3.6.2 Հետադարձ կապ մամուլի արձագանքներ և «Թեժ գծի» վերլուծություն /մաքսային ծառայության մասով/

Դեկտեմբերի 20-ից մինչև հունվարի 20-ը «Թեժ գծով» ստացվել է մոտ 600 զանգ: Զանգահարողների գերակշիռ մասը խնդրել է տրամադրել մաքսային մարմինների գործունեության և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հետ կապված տեղեկատվություն կամ խորհրդատվության կարիք է ունեցել: Նմանատիպ խնդրանքները բավարարվել են անմիջականորեն հեռախոսային խոսակցության ընթացքում: Վերոնշյալ զանգերից բողոք արձանագրվել է ընդամենը 6 դեպքում:

Բողոքները հիմնականում վերաբերել են գործարքի գնի մեթոդով ապրանքի մաքսային արժեքի որոշմանը, ավտոմեքենաների գնահատման և արտահանման թույլտվություն ստանալու հետ կապված հարցերին, ինչպես նաև փոխադրման ամփոփագրերի լրացմանն ու ընտրողականության համակարգին: Կախված անհրաժեշտությունից՝ քաղաքացուն կամ զանգահարել և պարզաբանում են տվել խնդրի առնչությամբ, կամ գրավոր պատասխան է տրվել, կամ էլ հրավիրել են կոմիտեի համապատասխան ստորաբաժանում՝ հարցն ավելի մանրամասն ուսումնասիրելու և տեղում անհրաժեշտ պարզաբանումներ տալու նպատակով:

Նշված ժամանակահատվածում «Թեժ գծով» օրական արձանագրվել է միջինը 15-20 զանգ:

Դեկտեմբերի 20-ից մինչև հունվարի 20-ն արձանագրված բոլոր բողոքներին արձագանքվել է:

Վերը նշված ժամանակահատվածում զանգահարողների կողմից որևէ առաջարկություն չի ստացվել:

3.7 Հարկային և մաքսային վիճակագրական մի քանի թվեր

3.7.1 Հարկային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2008 թվական		
		Դեկտեմբեր	Հունվար-դեկտեմբեր	Աճի տեմպ %
		1	2	3
1	Հաշվառված՝ ՀՎՀՀ ստացած հարկ վճարողներ (միավոր)	1653	22588	119.4
2	Հարկային մարմնի կողմից պետ բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ (մլն. դրամ), այդ թվում՝	36,912.3	432,351	115.8
2.1	ՍԱՀ	4,978.5	105,042	119.3
2.2	Շահութահարկ	7,153.4	86,212	114.2
2.3	Ակցիզային հարկ	975.6	12,576	96.9
2.4	Եկամտահարկ	6,433.0	53,749	114.8
2.5	Պարտադիր սոցիալական ապահովության վճար	11,303.2	105,099	118.6
2.6	այլ	6,068.6	69,673	113.6
3	Հարկային մարմնի կողմից կատարված հարկային ստուգումներ (հատ)	1405	15515	95.7
4	Հարկային ստուգումների արդյունքում լրացուցիչ առաջադրված գումարներ (մլն. դրամ)	6,427.6	42,358.6	173.1

3.7.2 Մաքսային վիճակագրության մի քանի թվեր

	Ցուցանիշ	2007 թվական		2008 թվական		Աճի տեմպ %
		հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	հունվար-դեկտեմբեր	դեկտեմբեր	
		1	2	3	4	5
1	Մաքսային մարմնի կողմից պետական բյուջե հավաքագրված մաքսային եկամուտներ (մլն դրամ)	210,923	17,885	287,852	21,589	136,4
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը (մլն դրամ), այդ թվում՝	1,524,498	172,148	1,691,745	149,546	111.0
	արտահանում (մլն դրամ)	441,803	48,3920	324,750	18,856	78.9
	ներմուծում (մլն դրամ)	1,112,695	123,756	1,366,995	130,690	122.9
3	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվը (միավոր)	30,137	4,938	35,287	5,641	117,1